

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» հուլիսի 2019 թ.

N 1527

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 3-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝


ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝


«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և այն փակ բաժնետիրական ընկերությունների, որոնց հարյուր տոկոս՝ բաժնեմասի տիրապետման իրավասությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման և մրցութային հանձնաժողովի ձևավորման և կազմի հաստատման կարգը հաստատելու մասին» հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Հավելվածի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5. Հանձնաժողովը ձևավորում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար): Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նախարարը, նախարարի տեղակալները, նախարարի խորհրդականները, նախարարի օգնականները, նախարարության գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, նախարարության սոցիալական ապահովության ծառայության պետը, նախարարության գրասենյակի ղեկավարը, Զբաղվածության պետական գործակալության պետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի և հասարակական կազմակերպության մեկական ներկայացուցիչ:».

2. Հրամանի հավելվածի 21-րդ կետի «առնվազն հիսուն միավոր» բառերը փոխարինել «առավելագույն հնարավոր միավորների 2/3-ը» բառերով:

X 
Signed by: GASPARYAN GEMAFIN 2408840236



Ձ. ԲԱԹՈՅԱՆ/